Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության 2013 թվականի գործունեության վերաբերյալ

Ունենալով ռազմավարական նշանակություն պարենային ապահովության հիմնախնդրի լուծման, գյուղական տարածքների զարգացման ու գյուղական բնակավայրերի ամրապնդման համար, գյուղատնտեսությունը վճռորոշ դեր է խաղում երկրի անվտանգության, կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում:

Որպես գյուղատնտեսության ոլորտում քաղաքականություն մշակող և իրականացնող պետական կառույցի՝ գյուղատնտեսության նախարարության 2013 թվականի գործունեությունը նպատակաուղղված է եղել հողօգտագործման ու անասնապահության վարման կատարելագործման արդյունքում գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ավելացմանը, ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան՝ աշխատանքների կատարմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը:

2013 թվականին գյուղատնտեսական հիմնական ծրագրերի և միջոցառումների իրականացման նպատակով պետբյուջեից նախարարությանը հատկացվել է շուրջ 3.0 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է գյուղատնտեսական գործունեություն իրականացնողներին մատչելի պայմաններով վարկավորման գործընթացը: 2013 թվականին գյուղատնտեսությունում տնտեսվարողներին տրամադրվել է շուրջ 3.4 մլրդ դրամ ընդհանուր գումարով վարկ:

Ըստ օպերատիվ հաշվարկների, ակնկալվում է, որ 2013 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքը, նախորդ տարվա համեմատությամբ, կաճի 8-10 տոկոսով, ինչը, բնականաբար, կհանգեցնի երկրի համախառն ներքին արդյունքի մեջ գյուղատնտեսության ոլորտի տեսակարար կշռի ավելացմանը:

Հաշվետու տարում շարունակվել են բուսաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերը:

Այսպես, հողերի բերրիության վերականգնման և գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման նպատակով, հաշվետու տարում 62.0 մլն դրամ է հատկացվել սև ցելի մշակության համար: Արդյունքում, 2013 թվականին սև ցելի տակ թողվել է 1550.0 հա տարածք, ինչը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը 41.4 տոկոսով (2013 թվականին ցելադաշտերի վրա ցանված հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը կազմել է 21.4 գ/հա, այն դեպքում, երբ մնացած տարածքներում (առանց վարձակալված և ոռոգված տարածքների) այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 14.6 գ/հա):

2013 թվականին շարունակվել են սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների ծրագրերը, որոնց իրագործումը հնարավորություն է տալիս կանխել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային ցածր որակ ունեցող սերմերի օգտագործումն ու ապահովել կոնդիցիոն սերմերի վերարտադրությունը, ինչպես նաև ընդլայնել բույսերի նոր սորտերի կազմը: Ծրագրերի շրջանակներում, 2013 թվականին իրականացվել են գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի 400 նմուշի լաբորատոր ստուգման և 36 սորտի (հիբրիդի) տնտեսական պիտանիության պետական փորձարկման աշխատանքներ:

Հանրապետությունում կայուն բուսասանիտարական վիճակի ստեղծման նպատակով շուրջ 71.3 հազար հա-ի վրա կատարվել են հողերի դաշտային հետազոտություններ և ցանքսերի բուսասանիտարական վիճակի ուսումնասիրություններ: Արդյունքում, ավելի քան 20.0 հազար հա-ի վրա կատարվել են մկնանման կրծողների, իսկ շուրջ 2.5 հազար հա-ի վրա՝ մորեխանման վնասատուների դեմ պայքարի կազմակերպման աշխատանքներ:

Ագրոտեխնիկական պահանջներով պարարտանյութերի օգտագործման և երաշխավորված բերքի ապահովման նախադրյալների ստեղծման համար, հաշվետու տարում իրականացվել է նաև 750 հողանմուշների ագրոքիմիական հետազոտություն:

Գյուղատնտեսության կայունության ապահովման նպատակով 2013 թվականին շարունակվել են ոլորտում օգտագործվող ռեսուրսների մատչելիության բարձրացման ծրագրերը:

Այսպես, 2013 թվականին հողօգտագործողներին տրամադրվել է ավելի քան 832.0 հազար լիտր դիզելային վառելանյութ՝ 350 դրամ/լիտր կանխիկ վճարման պայմանով, ընդ որում սուբսիդավորման չափը կազմել է 150 դրամ/լիտր:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանման, պարարտացման, ցանքսերի սնուցման և խնամքի այլ աշխատանքների իրականացման նպատակով հողօգտագործողներին տրամադրվել են ավելի քան 556.6 մլն դրամ արժողությամբ գարնանացան ու աշնանացան մշակաբույսերի սերմեր և շուրջ 680.7 մլն դրամ արժողությամբ պարարտանյութեր ու տարբեր թունանյութեր, ընդ որում սուբսիդավորվել է գարնանացան մշակաբույսերի սերմերի արժեքի 50 տոկոսը, մնացած մասը կանխիկ վճարել է հողօգտագործողը, բացառությամբ՝ կարտոֆիլի տնկանյութի, որը տրամադրվել է 170.0 դրամ/կգ-ով (սուբսիդավորման չափը կազմել է 50 դրամ/կգ), իսկ պարարտանյութերն ու թունանյութերը տրամադրվել են փոխառության կարգով՝ բերքահավաքից հետո մարման պայմանով (սուբսիդավորվել է պարարտանյութերի արժեքի 10-30 տոկոսը):

Հաշվետու ժամանակաշրջանում իրագործվել են Հադրութի շրջանի Բանաձորի, Ուխտաձորի, Տողի և Մարտունու շրջանի Վերին ենթաշրջանների գյուղատնտեսության զարգացման 2013 թվականի միջոցառումների ծրագրերը, որոնք նույնպես նպաստել են բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում համախառն արտադրանքի ավելացմանը:

2013 թվականին ԼՂՀ Ասկերանի շրջանի մի շարք համայնքներում (Քռասնի, Խաչմաչ, Իվանյան, Ջրաղացներ, Ներքին Սզնեք, Ավետարանոց) գյուղամերձ սեփականաշնորհված հողերի համատեղ մշակման ծրագիր է իրականացվել, որի նպատակը ցանքաշրջանառության, ինչպես նաև ճիշտ ագրոտեխնիկայի ու տեխնոլոգիայի կիրառման միջոցով երկար տարիներ չմշակված հողերի բերրիության բարձրացումն ու առավել բարձր բերքի ապահովումն է:

Համաձայն օպերատիվ տվյալների, 2013 թվականին հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ընդհանուր մակերեսը կազմել է 64931.5 հա: Ցանքատարածքների ավելացման առումով, նախորդ տարվա համեմատությամբ, էական աճ չի արձանագրվել (շուրջ 1.0 տոկոս): Սակայն, ի տարբերություն վերջին հանգամանքի, դրական տեղաշարժ է նկատվել ցանքատարածքների կառուցվածքի բարելավման ուղղությամբ: Այսպես, 2013 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, գարնանացան մշակաբույսերի ցանքատարածքներն ավելացել են 5.3 տոկոսային կետով՝ ի հաշիվ առավելապես եգիպտացորենի և որոշ կերային կուլտուրաների, որոնց մշակությունը չափազանց կարևորվում է ցանքաշրջանառության կիրառման ու կայուն կերային բազայի ստեղծման տեսանկյունից:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

/հեկտար/

	2012թ.	Տոկոսներով ընդամենի նկատմամբ	2013թ.	Տոկոսներով ընդամենի նկատմամբ
Ընդամենը	***64368.4***	***100.0***	***64931.5***	***100.0***
Աշնանացան մշակաբույսեր	52380.1	81.4	49436.7	76.1
Գարնանացան մշակաբույսեր	11988.3	18.6	15494.8	23.9

Ըստ օպերատիվ տվյալների, 2013 թվականին ցանքատարածքների գերակշռող մասը՝ 60147.1 հա-ը (92.6 տոկոսը), կազմել են հացահատիկային մշակաբույսերի տարածքները, մնացած

մասը՝ հատիկաընդեղենային, տեխնիկական, բանջարաբոստանային ու կերային մշակաբույսերը, կարտոֆիլը, հնդկացորենը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ

/հեկտար/

Շրջանի անվանումը	Ընդհանուր ցանքատարածությունը	*այդ թվում՝*						
		հացահատիկային մշակաբույսեր	հատիկաընդեղենային մշակաբույսեր	հնդկացորեն	կարտոֆիլ	տեխնիկական մշակաբույսեր	բանջարաբոստանային մշակաբույսեր	կերային մշակաբույսեր
Ասկերան	14460.5	12667.4	62.2	252.1	190.3	494.0	311.0	483.5
Հադրութ	9466.0	8715.0	45.0		157.0	206.0	180.0	163.0
Մարտակերտ	6323.4	5837.5		8.7	185.5	5.0	198.0	88.7
Մարտունի	15415.8	14275.3	51.2	227.3	134.5	188.5	173.0	366.0
Շահումյան	216.3	152.0	10.0		25.6		28.7	
Շուշի	235.7	144.4	18.1	23.8	30.2	5.0	12.7	1.5
Քաշաթաղ	18813.8	18355.5	18.4	1.5	48.0	2.0	232.6	155.8
Ընդամենը	***64931.5***	***60147.1***	***204.9***	***513.4***	***771.1***	***900.5***	***1136.0***	***1258.5***

2013 թվականին, նախորդ տարվա համեմատ, 2.8 տոկոսով կամ 1754.4 հա-ով կրճատվել են հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածքները՝ պայմանավորված հիմնականում ցորենի տարածքների 21.4 տոկոս կրճատմամբ: Ի տարբերություն ցորենի՝ գարու, հաճարի և եգիպտացորենի տարածքներն աճել են, համապատասխանաբար, 10.7, 26.1 և 93.1 տոկոսներով:

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

/հեկտար/

	2012թ.	2013թ.	Աճի տեմպը, %
Հացահատիկային մշակաբույսեր, *այդ թվում՝*	**61901.5**	**60147.1**	**97.2**
ցորեն	36428.7	28637.8	78.6
գարի	20065.7	22218.9	110.7
հաճար	1719.9	2169.1	126.1
եգիպտացորեն	3687.2	7121.3	193.1

2013 թվականին հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքն անկորուստ կազմակերպելու նպատակով ստեղծված հանրապետական օպերատիվ շտաբի արդյունավետ աշխատանքի արդյունքում հաջողվել է զերծ մնալ արտակարգ պատահարներից, բացառությամբ՝ Հադրութի շրջանում գրանցված 1 դեպքի, որի հետևանքով այրվել է 1 հա ցորենի ցանքատարածք:

Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի աշխատանքներում ընդգրկվել է ընդամենը 245 միավոր կոմբայն, այդ թվում 54 միավոր՝ ներգրավված ՀՀ-ից:

Հանրապետությունում ցանված հացահատիկային մշակաբույսերի 60147.1 հա տարածքներից, ըստ օպերատիվ տվյալների, փաստացի հնձվել է 53199.8 հա կամ ցանված տարածքների 88.4 տոկոսը՝ նախորդ տարվա 94.5 տոկոսի դիմաց, միջին բերքատվությունը կազմել է 18.7 g/հա, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 0.9 g/հա-ով, հավաքվել է 99510.1

տոննա հացահատիկ, ինչը նախորդ տարվա համեմատ պակաս է ավելի քան 4350.0 տոննայով կամ 4.2 տոկոսով:

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Շրջանի անվանումը	Ցանված տարածքը (հա)			Հավաքվել է փաստացի (հա)			Կալսվել է (տ)			Բերքատվությունը (g/հա)	
	2012թ.	2013թ.	2013թ-ը 2012թ-ի նկատմամբ, %-ով	27.12.2012թ.	27.12.2013թ.	2013թ-ը 2012թ-ի նկատմամբ, %-ով	27.12.2012թ.	27.12.2013թ.	2013թ-ը 2012թ-ի նկատմամբ, %-ով	27.12.2012թ.	27.12.2013թ.
Ասկերան	13542.7	12667.4	93.5	13036.1	11489.6	88.1	25914.6	26595.4	102.6	19.9	23.1
Հադրութ	8344.0	8715.0	104.4	8019.0	8675.0	108.2	15915.0	19763.5	124.2	19.8	22.8
Մարտակերտ	8122.7	5837.5	71.9	5992.0	4418.3	73.7	7587.5	6127.8	80.8	12.7	13.9
Մարտունի	13198.7	14275.3	108.2	13138.5	12939.5	98.5	21810.4	22447.0	102.9	16.6	17.3
Շահումյան	142.2	152.0	106.9	142.2	152.0	106.9	322.5	217.5	67.4	22.7	14.3
Շուշի	120.0	144.4	120.3	120.0	144.4	120.3	209.6	289.2	138.0	17.5	20.0
Քաշաթաղ	18431.2	18355.5	99.6	18041.6	15381.0	85.3	32102.5	24069.7	75.0	17.8	15.6
Ընդամենը	***61901.5***	***60147.1***	***97.2***	***58489.4***	***53199.8***	***91.0***	***103862.1***	***99510.1***	***95.8***	***17.8***	***18.7***

Ընդհանուր առմամբ, հնձվել է 25.9 հազար հա ցորեն, 18.8 հազար հա գարի, 2.1 հազար հա հաճար և 6.3 հազար հա եգիպտացորեն: Կալսվել է 46.8 հազար տոննա ցորեն, 28.5 հազար տոննա գարի, 3.1 հազար տոննա հաճար և 21.2 հազար տոննա եգիպտացորեն: Հացահատիկայինների միջին բերքատվությունը կազմել է, համապատասխանաբար, 18.0, 15.1, 14.5 և 33.6 g/հա:

Բացի այդ, եգիպտացորենի տակ ցանված տարածքներից 651.0 հա հնձվել է սիլոսի համար, հավաքվել է 10.2 հազար տոննա բերք, միջին բերքատվությունը կազմել է 156.7 g/հա:

ՑՈՐԵՆԻ, ԳԱՐՈՒ, ՀԱՃԱՐԻ ՈՒ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	Ցորեն			Գարի			Հաճար			Եգիպտացորեն		
	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)
Ասկերան	6311.8	11901.8	18.9	1732.7	2598.0	15.0	657.8	826.6	12.6	2787.3	11269.0	40.4
Հադրութ	4066.0	9531.0	23.4	4002.0	7365.0	18.4	77.0	187.5	24.4	530.0	2680.0	50.6
Մարտակերտ	1935.8	1798.7	9.3	1059.6	681.5	6.4	161.7	222.5	13.8	1261.2	3425.1	27.2
Մարտունի	8357.1	14609.3	17.5	3340.2	5070.8	15.2	40.2	47.1	11.7	1202.0	2719.8	22.6
Շահումյան	128.5	174.8	13.6	15.0	12.9	8.6				8.5	29.8	35.1
Շուշի	62.0	152.0	24.5	11.0	11.0	10.0	55.4	83.5	15.1	16.0	42.7	26.7
Քաշաթաղ	5079.0	8605.9	16.9	8659.0	12735.3	14.7	1147.0	1743.4	15.2	496.0	985.1	19.9
Ընդամենը	***25940.2***	***46773.5***	***18.0***	***18819.5***	***28474.5***	***15.1***	***2139.1***	***3110.6***	***14.5***	***6301.0***	***21151.5***	***33.6***

Ըստ ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայության տվյալների, 2013 թվականի հունիս-դեկտեմբեր ամիսներին (բերքահավաքի մեկնարկից սկսած ժամանակահատվածում) ԼՂՀ տարածքից արտահանվել է 17351.9 տոննա հացահատիկ: Արդյունքում, տարեվերջին հանրապետությունում հացահատիկի մնացորդը կազմել է 82158.2 տոննա:

ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ԲԵՐՔԻ ՇԱՐԺԸ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ
(ըստ ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայության տվյալների)

/տոննա/

Մշակաբույսի անվանումը	Արտադրվել է 2013թ.	Արտահանվել է 2013թ. (հունվար-դեկտեմբեր)	այդ թվում՝ բերքահավաքի մեկնարկից (հունիս-դեկտեմբեր)	Մնացորդը 5 = 2 - 4
1	*2*	*3*	*4*	*5*
Ցորեն (հաճար)	49884.1	3950.4	3905.4	45978.7
Գարի	28474.5	4770.4	4693.4	23781.1
Եգիպտացորեն	21151.5	8895.3	8753.1	12398.4
Ընդամենը	***99510.1***	***17616.1***	***17351.9***	***82158.2***

Սխալ ագրոմշակման և բնական աղետների հետևանքով զգալի վնաս է հասցվել 2013 թվականի բերքի տակ ցանված գարնանացան որոշ կուլտուրաների տարածքներին: Օպերատիվ տվյալների համաձայն, հնձվել է հլածուկի ցանքատարածքների 61.5 տոկոսը, արևածաղկի՝ 86.9 տոկոսը, սորգոյի՝ 32.6 տոկոսը, ինչը, բնականաբար, ազդել է բերքատվության ու համախառն արտադրանքի վրա:

ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՈՐՈՇ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ
ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	Հնդկացորեն				Հլածուկ				Արևածաղիկ				Սորգո			
	Ցանված տարածքը (հա)	Հնձվել է (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)	Ցանված տարածքը (հա)	Հնձվել է (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)	Ցանված տարածքը (հա)	Հնձվել է (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)	Ցանված տարածքը (հա)	Հնձվել է (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվությունը (g/հա)
Ասկերան	252.1	233.6	264.2	11.3	70.0				408.0	330.2	651.0	19.7	438.2	86.3	116.0	13.4
Հադրութ									200.0	200.0	500.0	25.0	53.0	47.0	156.5	33.3
Մարտակերտ	8.7	8.7	8.4	9.7									50.0	12.0	8.5	7.1
Մարտունի	227.3	213.1	183.2	8.6	112.0	112.0	141.1	12.6	27.5	27.5	45.7	16.6	290.7	146.3	45.0	3.1
Շահումյան																
Շուշի	23.8	23.8	19.0	8.0					5.0							
Քաշաթաղ	1.5	1.5	0.2	1.3					2.0	0.5	1.0	20.0	62.0			
Ընդամենը	***513.4***	***480.7***	***475.0***	***9.9***	***182.0***	***112.0***	***141.1***	***12.6***	***642.5***	***558.2***	***1197.7***	***21.5***	***893.9***	***291.6***	***326.0***	***11.2***

2013 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են տեխնիկական մշակաբույսերի, բանջարեղենի, խաղողի ու թթի արտադրության ծավալները, համապատասխանաբար, 3.3, 48.6, 29.5 ու 8.4 տոկոսներով, իսկ պտղի, բոստանային ու կերային մշակաբույսերի արտադրության ծավալները նվազել են, համապատասխանաբար, 42.3, 2.5 ու 7.9 տոկոսներով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոհիշյալ ցուցանիշներն արտահայտում են բերքահավաքի՝ մինչև սեպտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածի արդյունքները, նշված մշակաբույսերի համախառն արտադրանքի աճի դինամիկայի մասին կարելի է փաստել բերքահավաքի ամբողջական արդյունքները ճշգրտելուց հետո:

ՈՐՈՇ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

/տոննա/

Մշակաբույսի անվանումը	2012թ. հունվար-սեպտեմբերին	2013թ. հունվար-սեպտեմբերին	Աճի տեմպը (տոկոս)
Տեխնիկական մշակաբույսեր	1499.8	1548.7	103.3
Կարտոֆիլ	6696.2	6695.8	100.0
Բանջարեղեն	5120.5	7606.8	148.6
Բոստանային մշակաբույսեր	8653.2	8436.7	97.5
Կերային մշակաբույսեր	51113.8	47055.9	92.1
Պտուղ	9593.0	5537.4	57.7
Խաղող	8856.9	11469.2	129.5
Թուք	1946.8	2111.0	108.4

Պետք է ընդգծել, որ 2013 թվականին աննախադեպ բնական աղետները լուրջ վնաս են հասցրել գյուղատնտեսությանը:

Ընդհանուր առմամբ, տուժել են գյուղատնտեսական նշանակության շուրջ 13.7 հազար հա տարածքներ: Առավել շատ վնաս է հասցվել հացահատիկային մշակաբույսերին: Տուժել են ավելի քան 13.0 հազար հա ցանքսեր, այդ թվում՝ շուրջ 6.3 հազար հա չի հնձվել, ինչը բացասաբար է անդրադարձել հացահատիկայինների բերքատվության և համախառն արտադրանքի վրա:

2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

/հեկտար/

Շրջանի անվանումը	Ցորեն	Գարի	Հաճար	Եգիպտացորեն	Հնդկացորեն	Արևածաղիկ	Սորգո	Ծխախոտ	Բանջարեղեն	Խաղողայգի	Պտղատու այգի	Ընդամենը
Ասկերան	1253.3	452.1	51.8	199.4	23.5	78.4	107.2	9.8	4.3	33.8	25.2	2238.8
Հադրութ	60.2	50.0	7.2	63.7					9.8	17.6	1.0	209.5
Մարտակերտ	1579.6	1086.0	2.5	20.0					32.7		8.5	2729.3
Մարտունի	2228.1	652.0	7.0	38.8	15.1		4.5		21.9	96.0	84.8	3148.2
Քաշաթաղ	757.7	4502.0		58.0					24.0			5341.7
Ընդամենը	***5878.9***	***6742.1***	***68.5***	***379.9***	***38.6***	***78.4***	***111.7***	***9.8***	***92.7***	***147.4***	***119.5***	***13667.5***

2013 թվականին բնական աղետներից տուժած հողօգտագործողներին ԼՂՀ կառավարության կողմից աջակցություն է ցուցաբերվել:

Այսպես, կարկտահարությունից լրիվ ոչնչացած գարնանացան մշակաբույսերի ցանքատերերին յուրաքանչյուր հեկտարի դիմաց միանվագ տրամադրվել է 40.0 հազար դրամ՝ տուժած տարածքներում սև ցել կատարելու պայմանով, իսկ կրկնացանք կատարել ցանկացողներին անհատույց տրամադրվել են գարնանացան մշակաբույսերի սերմեր:

Բնական աղետներից 100 տոկոսով տուժած խաղողայգիների տերերին յուրաքանչյուր հեկտարի դիմաց միանվագ տրամադրվել է 100.0 հազար դրամ, ընդհանուր առմամբ՝ 9483.6

հազար դրամ: Բացի այդ, բնական աղետներից 100 տոկոսով տուժած խաղողայգիների և աշնանացան մշակաբույսերի շուրջ 5719.0 հա հողատարածքների հողօգտագործողները երկու տարով ազատվել են հողի հարկի և վարձակալության դիմաց վճարներից:

Հաշվետու տարվա սեպտեմբերից հանրապետությունում սկսվել են 2014 թվականի բերքի տակ աշնանացանի հետ կապված աշխատանքները:

Ըստ նախարարության օպերատիվ տվյալների, հանրապետությունում 2014 թվականի բերքի տակ կատարվել է 55012.4 հա հերկ և ցանվել 49749.6 հա աշնանացան հացահատիկ, որոնք նախորդ տարվա համեմատ ավել են, համապատասխանաբար, 1.2 և 2.5 տոկոսով:

Հանրապետության շրջաններում սև ցելի և գարնանացանի տակ հերկի աշխատանքները շարունակվում են:

2014 ԹՎԱԿԱՆԻ ԲԵՐՔԻ ՏԱԿ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՐԿԻ ԵՎ ՑԱՆՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

/հեկտար/

Շրջանի անվանումը	Կատարվել է հերկ			Ցանվել է հացահատիկ		
	առ 28.01.2013թ.	առ 27.01.2014թ.	%-ով նախորդի նկատմամբ	առ 28.01.2013թ.	առ 27.01.2014թ.	%-ով նախորդի նկատմամբ
Ասկերան	11481.0	11453.2	99.8	8872.4	9497.9	107.0
Հադրութ	7302.0	10887.0	149.1	7295.0	9700.0	133.0
Մարտակերտ	4988.1	4449.6	89.2	4371.8	4075.0	93.2
Մարտունի	14035.1	15024.6	107.1	12742.1	13821.1	108.5
Շահումյան	144.0	119.0	82.6	141.0	114.6	81.3
Շուշի	86.0	99.0	115.1	73.0	64.0	87.7
Քաշաթաղ	16338.0	12980.0	79.4	15059.0	12477.0	82.9
Ընդամենը	***54374.2***	***55012.4***	***101.2***	***48554.3***	***49749.6***	***102.5***

Նշենք նաև, որ ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Թովմասար տեղամասում չհերկված և մկնանման կրծողներով վարակված վարելահողերի հերկի ու ցանքսի աշխատանքների իրականացման և ԼՂՀ շրջաններում մկնանման կրծողների դեմ պայքարի կազմակերպման նպատակով հատկացվել է 50.0 մլն դրամ, այդ թվում՝ պայքարի կազմակերպման համար Մարտունու շրջանին հատկացվել է 10.0 մլն դրամ, Հադրութի շրջանին՝ 5.0 մլն դրամ, Քաշաթաղի շրջանին՝ 5.0 մլն դրամ, մկնդեղի ձեռքբերման համար՝ 10.0 մլն դրամ, Թովմասար տեղամասում համապատասխան աշխատանքների իրականացման համար՝ 20.0 մլն դրամ:

Անասնաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացման նպատակով 2013 թվականին շարունակվել են գյուղատնտեսական կենդանիների տոհմային ու մթերատու հատկանիշների բարելավման, անասնաբուծության ճյուղի վարկավորման ծրագրերը, ինչպես նաև սեմինարների հրավիրման և ֆերմերներին մասնագիտական խորհրդատվության տրամադրման աշխատանքները:

Հաշվետու ժամանակաշրջանում տոհմային տնտեսություններից հանրապետության ֆերմերներին արտոնյալ պայմաններով տրամադրվել է շուրջ հարյուր գլուխ տոհմային ցուլ, իսկ 2011 թվականին տոհմային ցուլերի վաճառքի արդյունքում առայսօր ստացվել է շուրջ 600 գլուխ բարելավված սերունդ:

2013 թվականին իրականացված անասնաբուժասանիտարական մի շարք միջոցառումների շնորհիվ հանրապետության անասնահամաճարակային ընդհանուր իրավիճակը կայուն էր, բացառությամբ՝ բրուցելյոզ և «աֆրիկական ժանտախտ» հիվանդությունների առանձին դեպքերի:

Հաշվետու տարում պետբյուջեից գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների և հակահամաճարակային այլ միջոցառումների իրականացմանն է ուղղվել շուրջ 350.2 մլն դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 16.6 տոկոսով: Բացի այդ, հաշվետու տարում ՀՀ

գյուղատնտեսության նախարարությունից օգնության կարգով ներկրվել են շուրջ 8.0 մլն դրամի չափով կենսապատվաստուկներ:

Արդյունքում, գյուղատնտեսական կենդանիների և թռչունների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կատարվել է 1575.3 հազար կանխարգելիչ սրսկում, լաբորատոր քննության է ենթարկվել արյան 107.8 հազար նմուշ, որից բրուցելյոզով հիվանդներ՝ 911 նմուշ (0.8 տոկոս): Նախորդ տարվա համեմատությամբ՝ կանխարգելիչ սրսկումների և լաբորատոր քննության ենթարկված նմուշների թիվն աճել է, համապատասխանաբար, 9.9 և 58.8 տոկոսով, իսկ կենդանիների հիվանդացածությունը նվազել 0.4 տոկոսային կետով:

Նշված տարում հանրապետության բոլոր շրջաններում արձանագրվել են խոզերի «աֆրիկական ժանտախտ» հիվանդության դեպքեր: Հիվանդության հետագա տարածումը կանխարգելելու նպատակով սատկած և անարյուն եղանակով ոչնչացված խոզերը հորվել են անասնագերեզմանոցներում, իսկ խոզաբուծությամբ զբաղվող անհատներին հանձնարարվել է սահմանել խոզերի փակ, մեկուսացված պահվածք: Նշված հիվանդությունից, ընդհանուր առմամբ, սատկել և անարյուն եղանակով ոչնչացվել է 1974 գլուխ խոզ, որից՝ 444 գլուխ Ստեփանակերտում, 81 գլուխ Շուշիի, 438 գլուխ Հադրութի, 152 գլուխ Քաշաթաղի, 106 գլուխ Մարտունու, 117 գլուխ Շահումյանի, 155 գլուխ Մարտակերտի և 481 գլուխ Ասկերանի շրջաններում:

Հանրապետության տարածքում տեղակայված կենդանական ծագումով մթերքների իրացման կետերում իրականացված տեսչական ստուգումների ընթացքում սահմանված կարգը խախտած ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվել են տուգանքներ: Արդյունքում, պետական բյուջե է մուտքագրվել 110.0 հազար դրամ:

Անասնաբուժա-սանիտարական միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով 2013 թվականին շահագործման է հանձնվել «Մարտակերտի անասնաբուժական սպասարկման կայան» ՊՈԱԿ-ի նոր շենքը: Ընթացքի մեջ են Հադրութի նոր վարչական շենքի կառուցման աշխատանքները:

Հաշվետու տարում հանրապետությունում արձանագրվել է գյուղատնտեսական կենդանիների, բացառությամբ՝ խոզերի, գլխաքանակի աճ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳԼԽԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

/գլուխ/

Շրջանի անվանումը	ԽԵԱ			այդ թվում՝ կովեր			Խոզեր			ՄԵԱ			Թռչուններ		
	առ 01.01.2013թ.	առ 01.01.2014թ.	Աճի տեմպը, %	առ 01.01.2013թ.	առ 01.01.2014թ.	Աճի տեմպը, %	առ 01.01.2013թ.	առ 01.01.2014թ.	Աճի տեմպը, %	առ 01.01.2013թ.	առ 01.01.2014թ.	Աճի տեմպը, %	առ 01.01.2013թ.	առ 01.01.2014թ.	Աճի տեմպը, %
Ստեփանակերտ	580	670	115.5	160	170	106.3	700	980	140.0	1600	680	42.5	27000	22000	81.5
Ասկերան	10720	11312	105.5	4427	4580	103.5	4903	3369	68.7	18592	19774	106.4	81311	70825	87.1
Հադրութ	7901	7644	96.7	3329	3080	92.5	2842	3099	109.0	8548	8711	101.9	50307	44807	89.1
Մարտակերտ	10313	10639	103.2	4766	4547	95.4	2743	1931	70.4	11193	13023	116.3	55195	63510	115.1
Մարտունի	10189	10899	107.0	4562	4615	101.2	4128	3827	92.7	11827	13840	117.1	83738	163810	195.6
Շահումյան	3421	3499	102.3	1332	1387	104.1	492	755	153.5	3392	1726	50.9	5846	6297	107.7
Շուշի	1041	1133	108.8	418	402	96.2	507	396	78.1	825	999	121.1	5295	4691	88.6
Քաշաթաղ	11647	12656	108.7	4711	4895	103.9	3019	3391	112.3	24116	29670	123.0	19430	22187	114.2
Ընդամենը	***55812***	***58452***	***104.7***	***23705***	***23676***	***99.9***	***19334***	***17748***	***91.8***	***80093***	***88423***	***110.4***	***328122***	***398127***	***121.3***

Համաձայն օպերատիվ տվյալների, 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ, նախորդ տարվա համեմատությամբ, հանրապետությունում ավելացել է ԽԵԱ-ի, ՄԵԱ-ի և թռչունների

գլխաքանակը, համապատասխանաբար, 4.7, 10.4 և 21.3 տոկոսով (2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԽԵԱ-ի գլխաքանակը կազմել է 58452 գլուխ, ՄԵԱ-ինը՝ 88423 գլուխ, թռչուններինը՝ 398127 թև), իսկ խոզերի գլխաքանակը նվազել 8.2 տոկոսով (2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ խոզերի գլխաքանակը կազմել է 17748 գլուխ), ինչը հիմնականում պայմանավորված է «աֆրիկական ժանտախտ» հիվանդության բռնկումներով:

Անասնագլխաքանակի աճը կարևոր նախադրյալ է հանդիսացել անասնապահական մթերքների արտադրության ծավալների ավելացման համար:

ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

	2012թ. հունվար-նոյեմբեր	2013թ. հունվար-նոյեմբեր	Աճի տեմպը (տոկոս)
Միս (կենդանի քաշով), *տոննա*	3927.8	4461.4	113.6
Կաթ, *տոննա*	32915.3	34318.7	104.3
Ձու, *հազ. հատ*	23149.6	24041.4	103.9
Բուրդ (ֆիզիկական քաշով), *տոննա*	111.1	187.3	168.6

Այսպես, 2013 թվականի միայն հունվար-նոյեմբեր ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել են մսի, կաթի, ձվի և բրդի արտադրության ծավալները, համապատասխանաբար, 13.6, 4.3, 3.9 և 68.6 տոկոսով (2013 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին արտադրվել է 4461.4 տոննա միս, 34318.7 տոննա կաթ, 24041.4 հազար հատ ձու, 187.3 տոննա բուրդ):

Գյուղատնտեսության ոլորտում արձանագրված դրական տեղաշարժերը նպաստել են հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության մեջ գյուղատնտեսական և ագրովերամշակման մի շարք արտադրանքների ծավալների ավելացմանը:

2013 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, 2.2 անգամ ավելացել են բանջարեղենի, 8.0 անգամ՝ խոզի մսի, 65.7 տոկոսով՝ մեղրի, 36.0 տոկոսով՝ գինու, 2.5 անգամ՝ կոնյակի, 8.6 անգամ՝ պանրի, 4.3 անգամ՝ բուսական յուղի արտահանման ծավալները:

Հաշվետու տարում շարունակվել են գյուղտեխնիկայի բնագավառում պետական տեսչական աշխատանքները, մասնավորապես՝ տրամադրվել են գյուղմեքենաների պետհամարանիշներ, տեխնիկական անձնագրեր, գյուղսարքավորումների գրանցման վկայագրեր, գյուղմեքենաների վարման իրավունքի վկայականներ, կատարվել են գյուղմեքենաների և սարքավորումների գրանցման, վերագրանցման ու հաշվառումից հանման, կորցրած պետհամարանիշների վերականգնման աշխատանքներ: Բացի այդ, իրականացվել են ստուգումներ, որոնց արդյունքում իրավախախտումներ թույլ տված մի քանի ֆիզիկական անձինք տուգանվել են:

Վերոնշյալ բոլոր աշխատանքների իրագործման արդյունքում պետական բյուջե է մուտքագրվել 1581.0 հազար դրամ՝ նախորդ տարվա 385.0 հազար դրամի դիմաց:

Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի թարմացման ու վերազինման նպատակով 2013 թվականին լիզինգային եղանակով հանրապետության տարբեր շրջանների տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվել է 1070.7 մլն դրամ ընդհանուր արժողությամբ գյուղտեխնիկա և սարքավորում, այդ թվում՝ 13 միավոր հացահատիկահավաք կոմբայն, 47 միավոր անիվավոր տրակտոր և 51 միավոր տարբեր սարքավորում:

Արդյունքում, 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում առկա գյուղտեխնիկայի քանակը կազմել է 2000 միավոր, այդ թվում՝ 320 միավոր հացահատիկահավաք կոմբայն, 838 միավոր անիվավոր և 765 միավոր թրթուրավոր տրակտոր, 29 միավոր բուլդոզեր, 25 միավոր կցասայլ, 5 միավոր սիլոսահավաք կոմբայն, 18 միավոր խոտհնձիչ:

Բացի այդ, առկա է նաև 207 միավոր հացահատիկային և 27 միավոր եգիպտացորենի շարքացան, 652 միավոր գութան:

ԱՌԿԱ ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱՅԻ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՌ 01.01.2014 ԹՎԱԿԱՆԸ

/միավոր/

Շրջանի անվանումը	Հացահատի-կահավաք կոմբայն	Անիվավոր տրակտոր	Թրթուրավոր տրակտոր	Բուլ-դոզեր	Կցասայլ	Սիլոսա-հավաք կոմբայն	Խոտհնձիչ	Ընդամենը շրջանում
Ասկերան	60	141	168	6	4	1	2	382
Հադրութ	56	95	120	2	3			276
Մարտակերտ	37	121	100	2	3			263
Մարտունի	87	195	283	4		1	12	582
Շուշի	2	11	8					21
Քաշաթաղ	1	13	6	1	1			22
Շահումյան		3	4					7
Ստեփանակերտ	77	259	76	14	14	3	4	447
Ընդամենը	***320***	***838***	***765***	***29***	***25***	***5***	***18***	***2000***

2013 թվականին ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությունը շարունակել է համագործակցությունն ինչպես Հայաստանի Հանրապետության համանուն կառույցի, այնպես էլ արտասահմանյան մի շարք կազմակերպությունների հետ:

Գյուղատնտեսության ոլորտի ուսումնասիրման, փորձի փոխանակման, ուսուցման, տնտեսական կապերի ստեղծման և ամրապնդման նպատակներով նշված տարում գործնական այցելություններ են իրականացվել Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, ԱՄՆ, Նիդերլանդների Թագավորություն:

2013 թվականին հերթական անգամ նշվել է գյուղատնտեսության աշխատողի օրը: Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում անց են կացվել տոնական միջոցառումներ, կազմակերպվել է մեծ ու գեղեցիկ տոնավաճառ-ցուցահանդես: Բացի այդ, ագրովերամշակման բնագավառի մի շարք տնտեսվարող սուբյեկտներ նախարարության աջակցությամբ հնարավորություն են ունեցել մասնակցել Երևանում կազմակերպված «Արմպրոդէքսպո» ցուցահանդեսին:

Հատկանշական է, որ 2013 թվականին գյուղոլորտի շուրջ երկու տասնյակ ներկայացուցիչ ԼՂՀ Նախագահի կողմից պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են ագրարային ոլորտի իրավաօրենսդրական հիմքերի բարելավման աշխատանքները: Վերջիններիս մեջ կարևոր մաս են կազմել սննդամթերքի անվտանգության համակարգի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքները, մասնավորապես՝ հաշվետու տարվա ընթացքում մշակվել են հիշյալ կառույցի կարգավիճակն ամրագրող և բնականոն գործունեությունն ապահովող մի շարք իրավական ակտերի նախագծեր:

Գյուղատնտեսության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը հետևողական կատարելագործելու, ինչպես նաև նախարարությանը վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով 2013 թվականին մշակվել և ընդունվել է ավելի քան չորս տասնյակ իրավական ակտ, այդ թվում՝ մեկ օրինագիծ, ԼՂՀ Նախագահի հրամանագրի մեկ նախագիծ, ԼՂՀ կառավարության որոշման երեսունչորս նախագիծ, ինը գերատեսչական նորմատիվ ակտ:

Գյուղատնտեսությունը շարունակում է համարվել տնտեսության գերակա ճյուղերից մեկը, որն իր ռազմավարական գործունեությունը շարունակելու է իրականացնել նաև 2014 թվականին: Այդ նպատակով 2014 թվականի պետական բյուջեից ոլորտին հատկացվել է 3180.0 մլն դրամ, որը կնպատակաուղղվի նախորդ տարիներին սկսված գյուղատնտեսական մի շարք ծրագրերի և միջոցառումների իրագործմանը: